

ՀԱՅԿԱԿԱՆ

ՃԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

ՔԱՋԱԶՆՈՒՄԻ ՂԱՐԱԳՅՈՂՅԱՆ

ԱԿԱՆԱՏԵՍԻ ՀՈՒՇԵՐԻՑ

Քաջագունների Ղարագյուղյանը ծնվել է 1904-ին Մեծաշտիայի Թամզարա գյուղում: Ինը տարեկանից սկսած անցել է Մեծ Եղեռնի, Դեր-Ձորի մանկան կրակների ու դժոխային սպանողի միջով, պատահաբար փրկվել ու վերադարձել է ծննդավայր, ապա 1937-ին բնակություն է հաստատել Օդեսայում, որից հետո Լենինականում (այժմ՝ Գյումրի): Երկար տարիներ աշխատել է Լենինականի դեպոյում: 1989-ին կնքել է իր մանկանացուն Լենինականում:

Քաջագունների Ղարագյուղյանը գրել է «Հուշեր Դեր-Ձորի ճանապարհից» ականատեսի արցունքներից ու անմեղ զոհերի արյան շիթերից քամված փաստավորագրական մատյանը, որտեղ, դեպի անապատներ գլորվող ու մեռնող քարավանների վերջին ճիչերի նկարագրություններից բացի զգալի տեղեկություններ կան նաև Մեծաշտիայի, առանձնապես Թամզարայի տեղագրության, ազգագրության, ուսումնական-թական բնագավառների շուրջ:

Դրանց պատմաբանասիրական և ազգագրական արժեքն ու արժանիքները ակնհայտ են: Մտորեն իրատարակում են Թամզարային վերաբերող որոշ հատվածներ: Նյութերը խմբագրությանը տրամադրել է Վարդանուշ Մահակյանը (տեքստագի):

Քսան տարի առաջ, 1895 թ. հոկտեմբեր ամսին, քաղաքի թուրքերը հարձակում գործեցին հայերի վրա: Նրանք, հայերի կողմից հանդիպելով դիմադրության, զայրացած ու կատաղած, ուղղություն են վերցնում դեպի շրջանի ամենամոտ հայաշատ բարեկեցիկ Թամզարա: Տեղի թուրքերի հետ միացած, հարձակում են գործում տեղի հայերի խանութների, տների վրա: Ամսխան կոտորում իրենց դեմ դուրս եկած թե՛ մեծերին և թե՛ փոքրերին: Այդ ժամանակ էլ, թուրքերի սրին զոհ են գնում նրա ծնողները (պապս և տատս): Դրանից հետո նրանք երկու քույր և երկու եղբայր, մնում են առանց ծնողի: Մեծ հորաքույրս՝ ամուսնացած, երկու երեխաների մայր, թալանից, ջարդից պաշտպանվելու համար, ամուսնու հետ երեխաներին գրկած կանգնում են տանն շենի վրա, կարծելով, որ թուրքերը երեխաներին այդ վիճակով տեսնելով կխղճան և անվնաս կհեռանան: Բայց այդպես չի լինում, հարձակվողներից մեկը ճանապարհի հարթելով ներս է մտնում, դանակով զարկում ամուսնու սրտին, որը երեխայի հետ մեկտեղ գլորվում է գետին, ինքը տեղում մահանում է, իսկ երեխայի երկու ոտքերը ջարդվում են: Այդ օրվանից հետո նա մեծանում է ոտքերից գրկված: Մի քանի ժամ տևող այդ չարիքն ու թալանը, հրամանով դադարեցվում է:

Այսպիսով Թամզարայի բարեկեցիկ հայությունը աղքատանում է, երեխաներից շատերը որբանում: Այդ դեպքից հետո, որ Թամզարայի ընտանիքների մի մասը, հետագայում, թուրքերի սիստեմատիկ խժոժություններից խուսափելու համար, թողնում և հեռանում են ծննդավայրից՝ այնտեղ թողնելով տունը և ունեցվածքը: Մեկնում են ուրիշ քրիստոնյա երկրներ՝ Ռուսաստան, Բուլղարիա, Ռումինիա և այլ ապահով տեղեր: Այդ պատճառով Թամզարայի հայության թիվը զգալի չափով պակասում է, վերջին շրջանում այնտեղ ապրում էին 250 հայ ընտանիք: Այդ դեպքերը պատմելու ընթացքում նա հաճախ կրկնում էր. «Այն փառք էր, հիմիկվանի հետ. մեռնողը մեռավ, կորածը կորավ, մնացողներս գեշ-աղետ կապեցինք մեր տուններում, մեր տեղում: Եղածը անցավ գնաց, գեշ-աղետ երեխաները մեծացան, եղբայրներս տուն տեղի, չոջուխների տեր եղան, որ հիմա, այս անապատների ճանապարհին սովից տանջվին... Վախ-վախ, աս ինչ գուլում էր եկավ ողջ հայության գլխին, ալ մեր, ողջ հայության վերջն է»: Հետո նա կրկին շարունակեց իր պատմությունը ներկայի դեպքերի մասին: Պատմեց, թե ինչպես տղամարդկանց հավաքելու ընթացքում մտնում են իրենց տուն, փոքր՝ 22 տարեկան տղային տանում են ոստիկանատուն, իսկ մեծին, որ ոտքերից գրկված նստած էր գետնին, հենց տան մեջ, մոր

աչքի առաջ գնդակահարում են ու հեռանում: Մայրն ընկնում է սպանված որդու վրա, և երկու օր մնում է այդ վիճակում: Երբ զգում է, որ այդ վիճակում պահել հնարավոր չէ, դուրս է ելնում հարևաններին օգնություն կանչելու: Դրսում նա ոչ ոքի չի գտնում:

Վերադարձի մեր ճանապարհը մեծ մասամբ անցնում էր այդ-ուղղությամբ, այն շատ տեղերում անցնում էր գյուղերի ու բնակավայրերի միջով, հենց այդպիսի տեղերում էլ մենք գիշերում էինք: Մի տեղ մեզ համարեցին ոչ արտոնված ուղևորներ և ցանկացան մեզ հետ պահել խմբից, սակայն ուղեկիցների խնդրանքների շնորհիվ այդ փորձանքից էլ ազատվեցինք: Ես չգիտեմ, թե քանի օր տևեց մեր վերադարձը, սակայն ամհամեմատ այն ավելի կարճ էր, քան գնալիս: Վերջապես մի օր կեսօրին, Շապին-Գարահիսարի բերդի տակով մտանք քաղաք, անցանք բերդի տակի հայկական թաղի կողքով, տեսանք այրված, ամայացած տները, եկեղեցին, առևտրական երկու տաշխանները, որոնց մեկի մեջ հայրիկիս խանութն էր գտնվում. հիմա նրանք դատարկ, անօգտագործելի վիճակի էին մատնված:

Հիշում եմ՝ դեռ մի քանի ամիս առաջ այդ շրջանը բազմաթիվ մարդկանցով աշխույժ եռուզեռի մեջ էր: Ծուկայի այդ մասում էր գտնվում «Կազինո» կոչվող շինությունը, որը ծառայում էր իբրև հյուրանոց: Մի քանի ամիս առաջ մասսայական ձերբակալված հայերի մի մասին տարան: Թամզարա տանող այդ ճանապարհի վրա, մանկական անցյալի որքան սրտամոտ, հարազատ հուշեր կան հոգուս մեջ: Այդ ճանապարհով էր տարիներ շարունակ ամեն օր հայրիկը գնում քաղաք, իր գործին և երեկոյան վերադառնում տուն: Մի քանի անգամ հայրիկիս ու մայրիկիս հետ այդ ճամփով գնացել եմ քաղաք, վերջին անգամ էլ հորեղբորս տղայի՝ Կարապետի հետ դպրոցից փախչելով՝ քաղաքի ճամփան ենք բռնել, հասել հայրիկիս խանութը: Տարին մեկ օր քաղաքի ողջ հայությունը այս ճամփով տեղափոխվում էր Թամզարա՝ Վարդավառի տոնակատարությունը այնտեղի վանքի շուրջը կատարելու համար: Ահա այն ուռիները, որոնց տակ հայրիկիս ու մայրիկիս հետ նստեցինք հանգստանալու, աղբյուրից ջուր խմեցինք: Ահա այն քարը, որի վրա մայրիկը ինձ նստեցրեց հանգստանալու, ահա այն ուղրապատույտ լեռնանցքը, որտեղից հորեղբորս տղայի՝ Կարապետի հետ անցնելիս բարձր ձայներ էինք հանում լեռներից արձագանքներ լսելու համար: Այս հիշողություններով քայլում էի ճանապարհով. շրջապատը ամեն ինչ նույնությամբ մնում էր: Հիմա միայն բազմաթիվ հայ ճամփորդներ այլևս չկային: Այո, ինչպիսի հարազատ դեմքեր կային, որ հիմա չկան: Մոտենում ենք Թամզարին, ահա հեռվից երևում է ինձ այն-քան ծանոթ շրջապատը, ճանապարհի այն բարձունքը, որտեղ շատ անգամ երեկոները կանգնած հայրիկի վերադարձին ենք սպասել, ահա ճանապարհի բաց տարածությունը, որտեղ մեզ հաց բաշխեցին և դուրս հանեցին մեր պապենական ծննդավայրից, քեզին դեպի անապատները տառապելու: Մենք այդ տառապանքների միջով անցանք ու տեսանք բոլորի տառապանքները, շատերի տանջալից վախճանը և մնացած շատ քեները, որոնք դեռ ի վիճակի էին ոտքի վրա կանգնելու, գնացին շարունակելու վերջ չունեցող տառապանքի ճանապարհը, քանի դեռ կարող էին, այնքան ժամանակ, մինչև մի օր, մի տեղ նրանք էլ գտնեին իրենց վախճանը: Այս էր բուն նպատակը: Մեզ՝ ողջ մնացածներից երկուսիս բախտ վիճակվեց կրկին վերադառնալու մեր ծննդավայրը՝ Թամզարա, իբրև վկաներ, թե ինչ վախճան ունեցան 280 տուն հայ ընտանիքների կանայք ու երեխաները: Հետո ճանապարհը շարունակեցինք, մտանք մրգատու պարտեզների շրջանը, անցանք բարդիներով շրջապատված ծառուղին, այդ արդեն համարվում էր Թամզարան, նրա մուտքը, Թամզարայի բնության ամենագեղեցիկ շրջաններից մեկը, որի վերջավորության վրա երևաց մեր հայկական թաղի ծայրամասը: Այդտեղից էր, որ մենք շատ անգամներ երեկոները կանգնած քաղաքից հայրիկի վերադարձին էինք սպասում, հենց որ հեռվում երևում էր, վազում էինք նրան ընդառաջ, ամեն մեկս մտքով սպասում էինք, թե քաղաքից հայրիկը մեզ ինչ է բերելու: Հիմա այնտեղ ոչ ոք չկար. միայն անցյալի իմ մանկական քաղաքի հիշողություններն էին, որ իմ սրտում վերհիշվեց ու սիրտս ծնվեց: Դանդաղ քայլերով անցանք տների կողքով և մտանք շուկա, այնտեղ նույնպես դատարկ էր, շատ քիչ մարդիկ էին երևում: Առաջինը մեր տան դիմացի Ավագենց խանութը աչքիս զարկեց. հազար ու մի ապրանքներով լիքը, իր տեսակի այդ միակ խանութը: Հիմա այն դատարկ, կիսավեր վիճակում էր, նրա դիմացը մեր թաղամասը տանող մեղ ճանապարհն էր, որտեղից երևում էր մեր հայրական երեք հարկանի տունը: Մի ակնթարթ աչքս զգեցի մեր այդ տան վրա. հիմա այն մնացել էր առանց դռների, լուսամուտների, թալանչիները քիչ էին համարել լիքը տան եղածը, պոկել, տարել էին դռներն ու լուսամուտները: Աչքերս փակեցի ու քրոջս սեղմվեցի, դանդաղ քայլերով առաջ անցանք ու եկանք կանգնեցինք մեծահարուստ Մուստաֆա էֆենդիի խանութի առաջ, մեր ուղեկիցները մեզանից բաժանվեցին ու շարունակեցին իրենց ճանապարհը: Էֆենդին, խանութի առաջ մեզ կանգնած տեսնելով, նստած տեղից ելավ, եկավ, դեմքով մեզ ճանաչեց, զարմացած նայեց մեր արտակարգ խղճալի տեսքին, հապճեպ մի քանի հարցեր տալուց հետո չուզեց մեզ ավելի երկար կանգնած պահել կիսաբոքիկ ոտքերով ծյան վրա, մեզ անմիջապես տարավ իրենց տուն, ներկայացրեց իր կնոջը, ինչ-որ բաներ մեզ պատվիրեց ու ինքը գնաց իր գործին: Խանութին այն կիցն էր, որ մեզ դուրս հանելու ժամանակ եկավ մայրիկիս առաջարկեց երկու քույրերիս թողնել իրեն մոտ, մայրիկս չէր համաձայնվել: Հիմա մեր ընտանիքից երկուսս, անցնելով բոլոր տեսակի տառապանքների ճանապարհը, կորցրած բոլոր հարազատներին, երկուսով եկել, կանգնել էինք այդ նույն կնոջ առաջ: Նա, մեր անսպասելի, հանկարծակի հայտնվելը տեսնելով, զարմացած մեզ նայեց, ավելի շատ զարմացավ մեր խղճալի վիճակը տեսնելով, նաև իմանալով մեր ընտանիքի մյուս անդամների ճակատագրի մասին, տխրեց, շատ ցավ հայտնեց. «Վախ-վախ, այս ինչ գուլում բերեցին մեզ հետ հաշտ ու խաղաղ ապրող այս ժողովրդի գլխին» ասելով և աչքերը սրբելով: Այո, թուրք կին էր, բայց վերջապես մարդ էր, նա նույնպես մարդկային խիղճ, սիրտ ուներ: Այո, բոլոր արարքների մեջ ժողովրդի բոլոր խոզերը չէ, որ չարիքին մասնակից եղան: Կինը մեզ անմիջապես կերակրեց, հետո իր ձեռքով մեզ լողացրեց, նոր շորեր հարմարեցրեց մեզ վրա, հին շորերը նետեց կրակի մեջ: Մենք դարձյալ մարդկային կերպարանք ստացանք: Մի քանի օր մնացինք այդ տունը: Այդ օրերից մեկում եկավ տեղացի Պոյուկ աղա անունով թուրք խանութպանը, որին ես լավ ճանաչեցի: Նրա խանութը գտնվում էր մեր տան դիմացի ճամփի տակը, ինձ առավ տարավ իրենց տուն, իրենց հետ ապրելու, տունը, խանութը գործ անելու: Այդ, իհարկե, լավ էր ապրելու, գոյությունը պաշտպանելու համար, ուրիշ ի՞նչ ելք կար այդ ժամանակ: Բայց առաջին իսկ օրը հիասթափվեցի ու ատելությամբ լցվեցի այդ տան հանդեպ՝ տեսնելով այնտեղ մեր տան իրերն ու կահկարասին: Պարզ էր, որ նրանք էին թալանել մեր տունը. զոհն ես չտեսնեի: Ինչ

արած. լռությամբ ու համբերությամբ աշխատեցի՝ հաշտվելով այդ ամենի հետ: Երբ շուկա, խանութը տարավ, տեսա այն արդեն իր նախկին խանութը չէր, հայի ընդարձակ, ճոխ խանութ էր զբաղեցրած՝ իր միջի պրանքներով: Այնտեղ կար վաճառքի դրված մեր տան, հայրիկիս պատկանող բամբակե կտորեղենը. այդ տեսնելովս սիրտս դարձյալ լցվեց: Ամեն օրվա իմ գործն էր փայտ կտորելը, Կաթնաղբյուրից ջուր բերելը, որտեղից ես միշտ մեր տան համար ջուր էի տանում անցնելով Ավագենց տան առջևից: Հիմա ավելի կարճ էր այդ ճանապարհը: Մեզ մահվան քշող ու մեր տունը թալանողների, թուրք անարժան մարդկանց հարկադրված ծառայություն էի անում մի կտոր փոր հացի համար. գոմը պետք է մաքրեի, անասուններին կեր, ջուր տալի: Երբ առաջին անգամ դուրս ելա ջուրը ձեռքիս մտա կիսախավար գոմը, երկու կով կար այնտեղ, դուրս ջուրը դրեցի առաջին կովի առաջ, երկի երկրորդ կովը մթության մեջ վիզը երկարեց իմ կողմը, սկսեց մռնչալ, երբ երկրորդ անգամ դուրս ելա ջուրը դրեցի նրա առաջ, նա փոխանակ ջուրը խմելու, սկսեց ձեռքերս լիզել. մթության մեջ նա ինձ իր նախկին կեր ու ջուր տվողին ճանաչել էր, ես էլ իրեն, մեր տան այնքան սիրելի կովին ճանաչեցի, այլևս սիրտս չդիմացավ, փաթաթվեցի կովի վիզը և լաց եղա: Հնար կարճ ժամանակվա ընթացքում տան ու խանութի՝ ինձ հանձնարարված գործերին ընտելացա, շատ պարտաճանաչ ու տեղին կարողանում էի կատարել, ինձնից գոհ էին: Արդեն խանութի առևտուրը աղան միայն ինձ էր վստահում:

Հաճախ նա օրերով բացակայում էր, գնում շրջակա գյուղերը՝ գնումներ կատարելու: Արդեն խանութը ես ինքս կարողանում էի բացել ու փակել: Օրվա ընթացքում շատ ծանրաբեռնված էի, խանութից տուն, տնից խանութ, ժամանակ չկար անգամ այցի գնալու մեր թաղը, տեսնելու հայրական տունը: Թամզայում երկու հայ ընտանիք էր մնացել: Նրանց պահել էին իբրև անփոխարինելի մասնագետների: Դրանք կաշեգործներ և ալրադաց ֆաբրիկայի ընտանիքներ էին: Նրանք հաճախ գալիս էին քաղաք՝ գնումներ անելու, նաև ինձ տեսնելու, ինձանից մի բան իմանալու մեր բոլորի ճակատագրի մասին: Ես էլ նրանցից էի մի բան իմանում: Նրանք գալիս էին այն ժամանակ, երբ աղան բացակայում էր: Այդպես իրենց ազատ էին զգում խոսելու և բան իմանալու, ես էլ նրանց ամեն ինչ ծրի էի տալիս և նրանցից էի իմանում մի որևէ բան: Հայերի տները մեծամասամբ դատարկ, կիսավեր վիճակում էին, միայն մի քանի տներ զբաղեցված էին թուրքերի կողմից, այն էլ ուրիշ շրջաններից եկած ընտանիքներ էին կամ առանձին պաշտոնյաներ:

Երկար ժամանակ քրոջս չէի տեսել. ինչ տեղափոխվել էի աղայի մոտ: Մի օր այդ հայերը եկան ինձ հայտնեցին, որ քույրս գտնվում է իրենց մոտ շրջանում հայի երկհարկանի մի տան մեջ թուրք ընտանիքի հետ, որոնք եկել էին մեր շրջանի մոտ Առուճոռա գյուղաքաղաքից: Այդ հայի տան մեջ բնակություն էին հաստատել: Հենց այդ թուրք ընտանիքը իմանում է քրոջս մասին և գնում, տեսնում, հավանում և տանում է՝ իրենց տղայի հետ ամուսնացնելու համար: Այսպիսով, այն, ինչից քույրս խուսափում էր ամբողջ ժամանակ, հիմա կանգնած է լինում անխուսափելի փաստի առաջ: Ես նրան չեմ տեսել և նրա հետ խոսակցություն չեմ ունեցել, թե ինքը այս նոր փորձանքի մասին ինչ է մտածում, ինչ կարելի է անել այդ փորձանքից ազատվելու համար: Հաստատ գիտեի, որ նա չէր հաշտվում, որ կարող է մի օր թուրքի հետ ամուսնանա և ապրի թուրքի հետ...

Արդեն հաջորդ տարին էինք մտել, չգիտեմ, թե որ ամիսն էր, դեռ ցուրտ էր: Ոտքերս երկարած քուրսի տակ նստած էինք աղան ու ես, հանկարծ դիմացի կողմից տեսա մեր տեր հորը իր չափահաս տղայի հետ: Նրանք գալիս էին ոստիկանների ուղեկցությամբ: Տանում էին ոստիկանատուն: Նրանց տեսնելով՝ ուրախացա, սիրտս մատան կողմը: Աղան ետևիցս խիստ զայրացած ինձ հետ կանչեց, թե ինչ է, ուզում ես քեզ էլ նրանց հետ ուղարկեմ, ուր որ նրանց պիտի տանեն: Վախեցած ետ դարձա: Նրանք ընդհանուր ձեռքակալության ժամանակ փախել և ապաստան էին գտել շրջակա հունական գյուղերում, մոտ ութ ամիս մնալուց հետո նրանց էլ հայր և որդի տարան այնտեղ, որտեղ տարան բոլորին, ի՞նչ հանցանքի համար. «հայ» լինելու համար...

Արդեն գարուն էր, աղան նստած էր իր տեղում, ես նստած էի կշեռքի մոտ, հենց նստած վիճակով հաճախորդին սպասարկեցի: Այդ ձևով հաճախորդին ճամփու դնելու համար աղան ինձ շատ խիստ տոնով հանդիմանեց, անգամ հայիոյանքով ինձ գլավորի տղա անվանեց: Փոքր էի, բայց ինքնասիրությունս վիրավորված զգացի, սիրտս չդիմացավ, աչքերս լցվեցին, լալով դուրս նետվեցի խանութից և քայլերս ուղղեցի դեպի քրոջս ապրած տան կողմը: Աղան ետևիցս մարդուղարկեց, համոզելով ուզեց ետ տանել, բայց արդեն ուշ էր, սիրտս կտրված էր. հաստատ որոշում էի կայացրել այլևս չծառայել այդ անարժան թուրքի մոտ:

Չորս ամսից-ավելի էր անցել, ինչ մենք կրկին վերադարձել էինք մեր ծննդավայրը՝ Թամզարա:

Քրոջիցս բաժանվելուց հետո նրան չէի տեսել: Ինքն իհարկե, չէր կարող գալ ինձ տեսնել, ես էի, որ պետք է գնայի այնտեղ, ուր ինքն էր գտնվում: Այդ ես չարեցի, չգիտեմ ինչու: Հիմա այդ առիթով սիրտս լցված, միակ հարազատ քրոջս, որին արդեն շատ էի կարոտել, առանց վարանելու մտա նրա գտնված տունը: Քույրս, հանկարծակի ինձ տեսնելով, մոռացավ ամեն տեսակ պատշաճ ձև, նետվեց ինձ-վրա. առանց խոսելու լաց էր լինում: Ես զգացի՝ նրա լացի մեջ կար և իր անձնական վիշտը, այն, որ հակառակ իր կամքին (իսկ ով էր մեր կամքը հարցնողը) իր անձնական կյանքը տնօրինված էր: Այն, որ պաշտոնապես պետք է ամուսնանար թուրքի հետ, որից ազատվելու ելք էր որոնում, մեկի օգնության կարիքն էր զգում: Միակ հարազատ եղբայրը, տղամարդը ես էի, որի հետ նույնպես օգնության հույսեր էր կապում, ինչպես ասում են «խեղդվողը ձեռքը գցում է փրփուրներին»: Ես այդ փրփուրն էի, որ կանգնած էի իր դիմաց: Ի՞նչ կարող էի անել. ոչինչ: Իմ ներկայությունը միայն մխիթարություն էր իր համար: Այդ մխիթարությունն էլ այն ժամանակ քիչ բան չէր մեր՝ երկուսիս համար:

Տանեցիները ինձ ընդունեցին սիրալի, իբրև բարեկամի: Այդ ընտանիքը բաղկացած էր չորս անձից. տան մեծը՝ հայրը, նախկին բարձրաստիճան զինվորական էր՝ պատկառելի տարիքով, մորուքով մարդ, արդեն հանգստյան կոչված, կինը՝ անհամեմատ երիտասարդ, իսկական խանում կին, չափահաս աղջիկը և տղան՝ փեսացուն. քրոջս հասակին, տասնվեց տարեկան, որը նոր էր վերադարձել Ավագից, ամուսնության համար ուսումը թողած շտապել էր տուն: Քույրս՝ արդեն իբրև թուրքի հարս, մտած էր թուրքական կենցաղի մեջ: Դուրս գալուց չադրա էր հագնում, երեսը քողով ծածկում:

1988թ., Երևան

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐ ԳՐԷՐ

ԱՐԺԵՐԱՎՈՐ ՆԵՐԴՈՒՄ XIX ԴԱՐԻ ԵՎՈՐԱՑԻ ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒԹՅԱՆ ԱՄՊԱՐԵԶՈՒՄ

ՆԵՒԻՏԱ ԴՈՒՈՒՍՆՅԱՆ

Ֆելիքս Ներ և Հայ քրիստոնեական մատենագրությունը,

Ե., «Արտագրք» հրատ.,

20001, 91 էջ

Գրականագետ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ա. Գ. Դոլուխանյանի սույն գիտահետազոտական ուսումնասիրությունը մտահղացվել է տարիների մանրակրկիտ պրպտումների ընթացքում և իբրև գիրք ամբողջացվել վերջին շրջանում: Հեղինակը դասախոսական աշխատանքին զուգահեռ, ջանադրորեն ուսումնասիրել է հայ հոգևոր մշակույթի հին ու նոր արժեքները և առանձին դեպքերում հանդես եկել եվրոպական ու ամերիկյան լսարանների առջև: Ազնիվ ու հայրենասիրական բարձր գիտակցումով համարձակորեն բախել է XIX դարի եվրոպացի նշանավոր հայագետների՝ գիտական հարուստ ժառանգության փակ դռները և ընտրել նրանցից մեկին՝ առավել մոռացված ու գիտական աշխարհին զրեթե անծանոթ բելգիացի աստվածաբան Ֆելիքս Ների հանգամանորեն ներկայացնելով նրա կյանքն ու գիտական-մանկավարժական գործունեությունը, ֆրանսերենով հրատարակած աշխատությունները, որոնց ցանկից առանձնակի քննության է ենթարկել միայն «Քրիստոնյա Հայաստանը և նրա մատենագիտությունը» (1886):

Այս ճանապարհին հարկ է եղել հանգամանորեն ներկայացնել Ֆ. Ների ապրած ժամանակաշրջանի պետական-քաղաքական անցուղարձեղը, գիտնականի հետաքրքրությունները, այնուհետև անդրադարձել է նրա ընդգրկած պատմական շրջաբաժանումներին, որ նշանակում է հայ ժողովրդի հայ պետության ու եկեղեցու, հայ հոգևոր մշակույթի դարերի համագոյություն ու զարգացում՝ սկսած վաղնջական ժամանակներից մինչև XIX դարի վերջին տասնամյակը:

Նյութը մատուցվել է ըստ կարգի, սկզբում Ֆ. Ների համառոտ կենսագրությունը, ապա 1841-1888 թթ. հրատարակած հայագիտական հետազոտությունները:

Զեն անտեսվում նաև, որ բելգիացի արևելագետ, հայագետ, փիլիսոփա Ֆելիքս Ների (1816-1893) մասին ժամանակի եվրոպական և հայկական պատմաբանասիրական գրականության մեջ ու մամուլում եղած հրապարակումները, որոնք, ունենալով կենսամատենագիտական տեղեկատվական բնույթ, մեր օրերում զրեթե մոռացության են մատնվել: Դրանցում համառոտ գծերով հիշատակվել են եվրոպացի հայագետների թողած գիտական ժառանգության ընդգրկումները (Գ. Ա. Շիրումպ, Սարուխան), այդ թվում նաև Գ. Արզարյանի կազմած բառահոդվածը (ՀԱՀ 8-րդ հատոր, 1982, էջ 239), որտեղ նշված են նաև նրա՝ հայագիտությանը վերաբերող հրապարակումները:

Հասկանալի է, որ այս նյութերը չեն կարող հիմք ծառայել Ֆ. Ների ման ընդգրկուն և բեղուն հայագետի ստեղծած գիտական գրականության քննության համար:

Պրոֆ. Ա. Դոլուխանյանը ընտրել է թեև անծանոթ ու բարդ ուղի, բայց նյութի խորիմացությամբ ու գիտական բարեխղճությամբ ներկայացրել է ֆրանսերենով հրապարակված հայագիտական աշխատությունները, քննական վերլուծությամբ, փաստերի ու փաստարկների համադրությամբ: Ուսումնասիրությունը տարվել է բանասիրական ընդհանուր վերլուծությունների՝ գիտական աշխարհում այսօր առա-